

ունենայ՝ թող չափաւորէ և հանդարտէ իւր յոյսը. վասն զի մէջը շատ քիչ բան խօսուած է սրբազան—Հայաստանի մասին, մինչև անգամ Լուսաւորչի անունն իսկ յիշուած չէ. իբրև դատարկաբաններու մէջ եղած խօսակցութիւն մի, անդադար կը սկսի և միշտ սկըսելու հետ է, առանց վերջը բերելու: Իր բովանդակ գրածներուն մէջ գուցէ ամենէն աւելի ակործելի լսուին այն խօսքերը, զորս իբր պատմաբան և մարգարէ՝ կը գրոշմէր. « Ce n'est pas à tort que les Arméniens se pleignent des injustices qu'on leur a faites, et qu'on leur fait encore tous les jours ». այսինքն, « Անիրաւ տեղ չէ որ Հայերը կը զանգատին անցեղոյն մէջ իրենց եղած անիրաւութեանց դէմ, որք և մինչև ցարդ միշտ կը շարունակուին »: Խօսքը աստուածաբաններու վրայ էր:

Իրաւամբ զարմանք կը յայտնէ Լա Կրոզ Շարաւէնի վրայ, որ իւր ժամանակին ըսած էր՝ թէ հայերէնն միայն եօթը դարերէ ի վեր կեանք ունի. դարձեալ Թէմիւնոյի վրայ (որուն յետոյ համաձայնեցաւ նաև Տալէռնիէ), որ կը հաստատէր՝ թէ հայկական զբաղւթիւնը զրի առնելու արուեստը չորս հարիւր տարիներէ առաջ չի կար. և հակառակողները յաղթահարել ուղղելով կը յիշատակէ Ս. Գիրքը, որոյ վայելչաբան թարգմանութիւնն եղած էր « Քրիստոսի Տեառն մերոյ 412 թուականին ժամանակները — environ l'an 412 de N. S. J. C. » (էջ. 33), յետոյ իւր խօսքը հետեւեալ տողերով կը շարունակէ, զորս լաւ է գլխէն մինչև վերջը կարդալ¹.

— 1. On trouve, outre cela, l'ouvrage d'un auteur, pour lequel les Arméniens ont beaucoup d'estime. C'est Moïse de Choren, auteur que l'on rapporte au cinquième siècle. Je le crois plus récent, quoique pourtant il ait quelque antiquité, son style arménien étant pur, mais extrêmement mêlé de fables. Il a été imprimé deux fois: premièrement en arménien à Amsterdam in 8°: depuis cette édition, deux doctes anglais, Guillaume et Georges Whiston, fils du célèbre professeur du même nom, qui a fait tant de bruit en Angleterre, l'ont fait imprimer en très beaux

« Բաց աստի (Ս. Գրքէն) ուրիշ գրուած
« մ'ալ կը գտնուի, ընծայուած այնպիսի
« մատենագրի մը, որոյ վրայ հայք մեծ
« համարումն ունին. այս հեղինակս է Մովսէս
« Խորենացի, զոր հինգերորդ դարու մէջ
« ապրած կը կարծեն. իսկ ես աւելի յետ
« նագոյն կը համարիմ զինքը, թէպէտ և
« բաւական հնագոյն ժամանակաւ, որովհետեւ
« տեւ իւր հայկական ոճը մաքուր է, բայց
« շատ առասպելխառն: Երկու անգամ տը
« պագրուած է. նախ, հայերէն՝ Ամստերդա
« մի մէջ՝ ութածալ, և յետոյ երկրորդ ան
« գամ՝ երկու անգլիացի գիտնականք Գու
« լիէլմ և Գէորդ Վիստոն, որոնք համա
« նուն հոգակաւոր վարժապետին¹, որ մեծ
« համբաւ ունեցաւ Անգլիոյ մէջ, տպագրե
« ցին զայն հայկական շատ գեղեցիկ տառե
« ռով, հանդերձ ամենընտիր լատիներէն
« թարգմանութեամբ: Որչափ և Վիստոն
« եղբարք բարի համարումն ցոյց կու տան
« այս մատենագրիս նկատմամբ, սակայն այսու
« հանդերձ անկարող եղան չի խոստովանելու՝
« որ նա այնքան վստահանալի չէ: Քիչ յե
« աոյ պիտի խօսիմ Ներսէս կաթողիկոսին
« վրայ, որ ոտանաւոր համառօտութիւն մի
« գրած է Մովսիսի պատմութեան: Այս

caractères arméniens avec une excellente traduction latine. Tout bien intentionnés qu'ils sont pour cet auteur, ils n'ont pas pu dissimuler le peu de fond qu'on peut faire de lui. Je parlerai bientôt du patriarche Nersès, qui a donné en vers un abrégé de l'Histoire de Moïse. Ce patriarche a vécu dans le douzième siècle, et il est mort l'an de Jésus-Christ onze cent septante trois; ce qui est une preuve positive, je ne dis pas de l'authenticité, mais de l'antiquité de l'Histoire de Moïse: (p. 335).

1. Արեգոք Գուլիէլմ Վիստոն իրենց հայրէ հայերէն լեզուն սովորած էր, թէ միայն նոյն ազգին սրբազան մատենագրութեամբ կը զբաղէր: Իւր խօսքին երկգլխի են, զորս լաւ է ուղղութեան առնուլ: Ուղղակեղով առ Լա Կրոզ՝ Ս. Պաւղոսի անվաւեր թղթերը, զորս Լա Կրոզ յետոյ թարգմանեց (Գաղատ. Գ. 527), Վիստոն կը գրէ իրեն 1725ին. « Videbis quantum hac occasione ipse et filii mei profecerimus in rebus armenicis indagandis », այսինքն է. « Պիտի տեսնես որչափ այս դէպքին մէջ ես ինքն և որդիքս ջան ի դորձ գրինք հայկական իրերը հետազոտելու » (THES. EPIST. I. 350).